

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՉԿԱԼՈՎԿԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

01.01.2011 – 30.12.2011 թ.

Համայնքի ղեկավար՝ Ե. Կարապետյան

Միքելի համագյուղացիներ՝

Թույլ տվեք ներկայացնեն 2011թ-ի գյուղապետարանի կողմից կատարված աշխատանքները, համեմատելով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի և ընթացիկ պլանի հետ:

2011թ-ին արձանագրվել է բավականին լավ ցուցանիշներ: Սեփական եկամուտների գծով, մասնավորապես հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարի:

2011թ.-ի ընթացքում հավաքագրվել է եկամուտներ 14501,0 հազ. դրամ, 2010թ-ին 11913,6 հազ. դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 121,7%:

Սեփական եկամուտները 2010թ-ին 5657,7 հազ. դրամի դիմաց 2011թ-ին հավաքագրվել է 9429,9 հազ. դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 166,7%:

Հողի հարկի գծով 2010թ.-ին հավաքագրվել է 3048,5 հազ. դրամ, 2011թ.-ին հավաքագրվել է 4592,1 հազ. դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 150,6%: Գույքահարկի գծով 2010թ-ին հավաքագրվել է 1000,8 հազ. դրամ, 2011թ-ին հավաքագրվել է 1762,8 հազ. դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 176,1%:

Ոչ հարկային եկամուտները 2010թ.-ին հավաքագրվել է 1202,9 հազ. դրամ, 2011թ-ին հավաքագրվել է 2912,0 հազ. դրամ կամ տարեկան պլանը կատարվել է 242,1%:

Ինչպես երևում է ցուցանիշների գծով համայնքը կատարել է և գերակատարել եկամուտների գծով, որը հիմք է հանդիսացել մեր բնականոն աշխատանքներին և նպաստել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Համայնքում տարեց - տարի արձանագրվում է դրական տեղաշարժեր:

Մեծ ուշադրություն է դարձվում համայնքի բնակչության սոցիալական և մշակույթի զարգացմանը:

Համայնքի բյուջեյից տրվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին և կարիքավորներին տարբեր նպատակներով:

2011թ.-ի ընթացքում թաղման կապակցությամբ և անապահով ընտանիքներին տրվել է նպասատ 975,0 հազ. դրամ:

Պատշաճ կերպով կազմակերպվել է նախատեսված բոլոր միջոցառումները (շրջանավարտների, առաջին դասարան հաճախողների, հայրենական պատերազմի, մարտի 8-ի և այլն):

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքները ընդգրկվել են «Փարոս» համակարգ:

Հասարակական կարգի պահպանումը լավ հիմքերի վրա է դրված:

Իրավախախտումներ չկա շնորհիվ երիտասարդության շրջանում մշտապես տարվող դաստիարակչական և ռազմահայրենասիրական աշխատանքների:

Քաղաքաշինության բնագավառում սահմանված կարգով վարվել է քաղաքաշինական աշխատանքները:

Համայնքում կատարվում է աղբահանության աշխատանքները:  
Գեղարքունիքի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի միջոցով  
«Հայկական Կարիտասի» ծրագրով կատարվել է գրասենյակի դահլիճի  
կապիտալ վերանորոգման աշխատանքները:

Սեփական միջոցների հաշվին կատարվել է գրասենյակի մասնակի  
վերանորոգում 1192.0հազ.դրամ:

2011թ.-ից ընթացքի մեջ է Համաշխարհային բանկի և Ծիզ ծրագրով  
կատարվելիք արոտների ջրարբիացման ծրագրերի աշխատանքները,որի  
համար համայնքային ներդրումը կազմում է 4090.0հազ.դրամ:

Համայնքում ստեղծվել է «Չկալովկա համայնքի արոտագտագործողների  
միավորում » սպառողական կոպերատիվը:

2011թ-ին բնապահպանական ծրագրով սեփական միջոցների հաշվին  
կատարվել է հին աղբավայրի մաքրման աշխատանքները:

Ցավոք պետք է նշեմ, որ համայնքի բյուջեն հնարավորություն չի տալիս  
լուծելու շատ հրատապ խնդիրներ:

Համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված է սպորտային  
հրապարակի կառուցում :Ֆինասական միջոցներ լինելու դեպքում  
առաջնահերթ կուղղվի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման  
2012 – 2015թթ. ծրագրի իրականացմանը:

Համայնքը ունի իր զարգացման քառամյա ծրագիրը, որով նախատեսվում  
է 2011թ. – 2012թ. –ին կատարել ներքին ճանապարհների բարեկարգում և  
մշակույթի տան վերանորոգում:

Վերջին տարիներին աշխատակազմի կողմից կատարված աշխատանքների  
շնորհիվ զգալիորեն բարձրացել է համայնքի դերը:

Հույսով եմ, որ նրանց շնորհիվ ի վիճակի ենք կատարելու ինչպես  
քառամյա ծրագրով այնպես էլ աշխատանքի ընթացքում առաջացած  
առաջնային խնդիրները:

ԶԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /

/ Ե.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

